ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ. 0255-2-21-76
էլ. Փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 6

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 06 - Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արևաշող համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 6 - ի նիստի օրակարգը

Օրակարգ

Արևաշող համայնքի 2021թ – ի ապրիլի 6 – ի նիստի

1. Արևաշողի համայնքապետարանի և «Արևաշող» կլիմայական շրջանառու ներդրումային հիմնադրամի միջև 2020 թվականի մարտի 22 – ին կնքված թիվ 1 նվիրաբերության պայմանագրին հավանություն տալու մասին:
2. Արեվաշող համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին:
3. Արեվաշող համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման ու իրականացման մասին:
4. Արեվաշող համայնքի կենտրոնական ճանապարհի երկրորդ հատվածի մի մասի հիմնանորոգման սուբվենցոն ծրագրին համաձայնություն տալու մասին:
5. Լոռու մարզի Արեվաշող համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին:

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռ. +374(0255)-2-21-76
Email - arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 7-Ա

ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ԱՐԵՎԱՇՈՂ» ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22 – ԻՆ ԿՆՔՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արևաշողի համայնքապետարանի և «Արևաշող» կլիմայական շրջանառու ներդրումային հիմնադրամի միջև 2020 թվականի մարտի 22 – ին կնքված թիվ 01 պայմանագրի դրույթները, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ Արևաշող համայնքում փողոցային լուսավորության էներգախայողությանը նպատակաուղղված Արևաշողի համայնքապետարանի և «Արևաշող» Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի միջև 2020թ.-ի մարտի 22 - ին կնքած թիվ 01 նվիրաբերության պայմանագրին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռ. +374(0255)-2-21-76
Email - arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 8-Ա

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1 ին մասի դրույթներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարել փաստաթղթային կարգով:
2. Հաստատել՝ Լոռու մարզի Արևաշող համայնքի

   1) Տեղական տուրք վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի

   2) Տեղական վճար վճարողների գրանցամայանի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի
Արևաշող համայնքի ավագանու
2021 թվականի ապրիլի 6 – ի
թիվ 8-Ա որոշման

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
Տեղական տուրք վճարողների

Հ/Հ	Վճարողի			Տեղական տուրքի տեսակը	Հայտի ներկայացման ամսաթիվը	Տուրքի վճարման		Համայնքի ղեկավարի որոշման		Թույլտվություն		
	Անուն Ազգանունը /կամ՝ իրավաբանական անձի անվանումը/	ՀՎՀՀ կամ անձը հաստատող փաստաթղթի համարը	Գործունեության իրականացման վայրի հասցեն			ամսաթիվը	Գումարը (ՀՀ դրամ)	համարը	ամսաթիվը	համարը	ամսաթիվը	Ժամանակահատվածը՝ որի համար տրամադրվել է
1	2	3	4	5	10	11	12	13	14	15	16	17

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

Հավելված թիվ 2
ՀՀ Լոռու մարզի
Արևաշող համայնքի ավագանու
2021 թվականի ապրիլի 6 – ի
թիվ 8-Ա որոշման

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Տեղական վճար վճարողների

Հ/Հ	Վճարողի			Տեղական վճարի տեսակը	Պայմանագրի կամ որոշման		վճարման	
	Անուն, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը	ՀՎՀՀ կամ անձը հաստատող փաստաթղթի համարը	Գործունեության իրականացման վայրի հասցեն		համարը	ամսաթիվ	ամսաթիվ	Գումար (ՀՀ դրամ)
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռ. +374(0255)-2-21-76
Email - arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 9-Ն

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3, 4, 5, 6 և 7-րդ կետերով, 10-րդ հոդվածի 4-րդ կետով, 13-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով և 19-րդ հոդվածի 4-րդ կետով, Արևաշող համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում ոչ կենցաղային աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդները ըստ անշարժ գույքի նպատակային և/կամ/ գործառնական նշանակության՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելված 5-ի:

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի
Արևաշող համայնքի ավագանու
2021 թվականի ապրիլի 6 – ի
թիվ 9-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում աղբահանության իրականացման

Աղբի հեռացումը Արևաշող համայնքի վարչական տարածքից պետք է կատարվի համայնքի տարածքում տեղադրված աղբարկղներից, անհատական հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:

Աղբի հեռացումը աղբարկղներից պետք է կատարվի մասնագիտացված աղբատար մեքենայով: Աղբը պետք է հեռացվի միրնչև աղբարկղների ամբողջությամբ լցվելը:

Աղբարկղերի շրջապատում առկա և հեռացման ընթացքում թափված աղբը պետք է հավաքվի և հեռացվի:

Անհատական բնակելի տներից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից աղբի հեռացումը պետք է կատարվի միայն աղբի հեռացման համար նախատեսված բեռնատար մեքենաներով, փաթեթավորված կամ տարաներում լցված աղբի բարձման միջոցով: Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պետք է պարտադիր հեռացվի՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

Աղբահանությունը Արևաշող համայնքում պետք է իրականացվի համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

Հունվարից – դեկտեմբեր ամսական 8 անգամ:

Հ/հ	Աղբամանի գտնվելու վայրը	Քան	Տեսակը
1.	1 – ին փողոցի սկզբնամաս	2	Մետաղյա
2.	1 – ին փողոց (Պապիկյան Գերասիմի խանութի մոտ)	2	Մետաղյա
3.	1 – ին փողոց (Նախկին կարի ֆաբրիկայի մոտ)	3	Մետաղյա
4.	1 – ին փողոց 57 Տնակ (07/12/1988թ –ի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի մոտ)	3	Մետաղյա
5.	1 – ին փողոց կենտրոնական հատված	3	Մետաղյա
6.	1 – ին փողոց (Թաղևոսյան Արտակի խանութի մոտ)	3	Մետաղյա
7.	1 – ին փողոց 14 նրբ. (Համայնքի Բույժամբուլատորիայի մոտ)	2	Մետաղյա
8.	1 – ին փողոց 105 (համայնքապետարանի դիմաց)	2	Մետաղյա
9.	1 – ին փողոցի կենտրոնական հատված 2 –րդ մասում	2	Մետաղյա
10.	1 – ին փողոց (Ղազարյան Սարգիսի խանութի մոտ)	3	Մետաղյա
11.	1 – ին փողոց (Մանուկյան Վահեի խանութի մոտ)	3	Մետաղյա
12.	1 – ին փողոց 139 (Բաղոյան Սեդրակի տան մոտ)	2	Մետաղյա
13.	1 – ին փողոցի վերջնամասում	3	Մետաղյա
14.	1 – ին փողոց (Մխիթարյան Բաղիշի տան մոտ)	3	Մետաղյա
15.	1 – ին փողոց 11 նրբ. (Դինամալոնց թաղամաս)	4	Մետաղյա
16.	3 – րդ փողոց («Լեզվակ» թաղամասում)	10	Մետաղյա
17.	10 – րդ փողոցի վրա ?	2	Մետաղյա
18.	10 – րդ փողոց 17/1 («ՀԱՍՄԻԿ» ՆՈՒՀ ՀՈԱԿ – ի մոտ)	2	Մետաղյա
19.	10 – րդ փողոց 7 տան (Խաչատրյան Համլետի տան) մոտ ?	3	Մետաղյա
20.	11 – րդ փողոց («Թաքուններ» թաղամաս)	3	Մետաղյա
21.	13 – րդ փողոց («Գերմանական» թաղամաս տանող ճանապարհին կամրջի մոտ)	5	Մետաղյա
22.	Գերեզմանատուն տանող ճանապարհին	3	Մետաղյա
23.		68	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

Հավելված թիվ 2
ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու
2021 թվականի ապրիլի 6 – ի թիվ 9-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանների

1. Սույն կարգով սահմանվում են Լոռու մարզի Արևաշող համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու կարգը:
2. Լոռու մարզի Արևաշող համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը՝ տրվում է Լոռու մարզի Արևաշող համայնքի համայնքի ղեկավարի կողմից:
3. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում համապատասխան հայտ:
4. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
5. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու հետ միաժամանակ համայնքի ավագանու կողմից համայնքի տարածքում սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:
6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորագիրն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման հաստատված թույլտվությունը:
7. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը ստանալու մասին հայտը մերժվում է եթե՝ հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, կամ չեն համապատասխանում համայնքի ավագանու կողմից հաստատված պայմաններին:
8. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:
9. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության ստանալու մասին հայտը մերժելու դեպքում պետք է հստակ նշվեն հայտի մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:
10. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

Հավելված թիվ 3
ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու
2021 թվականի ապրիլի 6 – ի թիվ 9-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի սանիտարական մաքրման սխեմայի

1. Արևաշող համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, բակերի, կամուրջների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևներից, կենդանիների դիակներից, ավազից, քարերից և ձյունից:
2. Համայնքի սանիտարական մաքրման աշխատանքները կապված տարվա եղանակների սեզոնայինության բնույթով և դրանց առաջացրած սանիտարական մաքրման խնդիրների լուծումներով տարբեր են, ուստի և սանիտարական մաքրման աշխատանքերը բաժանվում են երկու տիպի ամառային և ձմեռային:
3. <u>Ամառային սանիտարական մաքրում</u>,- Այն իրենից ներկայացնում է սանիտարական մաքրման ձեռքի աշխատանքներ, որի նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովել համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների պատշաճ մաքրումը աղբից, թափված տերևներից, կենդանիների դիակներից այդպիսով պատշաճ տեսքի բերելով համայնքի ընդհանուր օգտագործման տարածքները զերծ պահելով այդ տարածքները զանազան հակասանիտարական վիճակներից: Սանիտարական մաքրման արդյուքում հավաքված աղբը հավաքվում է համայնքի փողոցներում տեղադրված աղբարկղներում:
4. <u>Ձմեռային սանիտարական մաքրում</u>,- Այն իրենից ներկայացնում է տեղացած ձյունից, գոյացած սառցակույտերից և աղբից համայնքի փողոցների մաքրումը և հեռացումը:
5. Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալը կազմում է 28 տոննա:
6. Արևաշող համայնքում սանիտարական մաքրման համար անհրաժեշտ մեքենա մեխանիզմներին ներկայացվող պահանջները
   1) Արևաշող համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը պետք է կատարվի միայն աղբահանության համար օգտագործվող բեռնատար մեքենաների միջոցով՝ ձեռքով, իսկ աղբամաններից մեքենայացված բարձման միջոցով:
   2) Փողոցներից և ընդհանուր օգտագործման տարածքներից ձյան մաքրման աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան մասնագիտացված մեքենաների կամ դրանց փոխարինող մեխանիզմների միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

Հավելված թիվ 4
ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու
2021 թվականի ապրիլի 6 – ի թիվ 9-Ն որոշման

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ

ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի 1 խ/մ աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող ըստ անշարժ գույքի նպատակային և (կամ) գործառնական նշանակության

Հ/հ	Աղբի առաջացման օբյեկտ /անձ/ կամ գործունեության տեսակ	Առաջացված աղբի նորմատիվները ամիս/խմ
1.	Մթերային խանութներ	
Ա.	25-70 քմ առևտրային մակերես	1.2
Բ.	70-100 քմ առևտրային մակերես	1.6
2.	Գրասենյակային տարածքներ	
Ա.	25-70 քմ մակերես	1.2
Բ.	70-100 քմ մակերես	1.6
3.	Հանրակրթական Դպրոցներ	
Ա.	1 անձի համար	0.008
4.	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ	
Ա.	1 անձի համար	0.032

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

Հավելված թիվ 4
ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու
2021 թվականի ապրիլի 6 – ի թիվ 9-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման

1. Արևաշող համայնքում աղբահանության վճար վճարողներն են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի տան, շինության սեփականատեր համարվող ըստ այդ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) այդ հասեցում բնակվող կամ, որևէ այլ իրավունքով այդ անշարժ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ անհատ ձեռնարկատերերը), իրավաբանական անձինք, պետական և մասնավոր հիմնարկները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում գույքի վարձակալը կամ անհատույց օգտագործողը:
2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և մուտքագրումը համայնքի բյուջե վերապահել համայնքի աշխատակազմի առաջատար մասնագետին, իսկ նրա բացակայության դեպքում աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետին:
3. Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահը համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն ընթացիկ ամսվա ընթացքում այդ ժամանակաշրջանում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև աղբահանության վճարի գանձման աշխատանքների իրականացման արդյունքների վերաբերյալ:
4. Արևաշող համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և աղբահանության վճարի հաշվարկումը կատարվում է համայնքի ավագանու կողմից սահմանված աղբահանության վճարի դրույքաչափերին համապատասխան սույն կարգով՝
   1) Կենցաղային աղբի համար ըստ անշարժ գույքի հասցեի հաշվառում ունեցող և (կամ) այդ հասեցում բնակվող յուրաքանչուր անձի:
   2) Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ թիվ 4 հավելվածում սահմանված աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդների և աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրերի:
5. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի

պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Արևաշող համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռ. +374(0255)-2-21-76
Email - arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 10

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾԻ ՄԻ ՄԱՍԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՍՈՒԲՎԵՆՑՈՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Արեվաշող համայնքի կենտրոնական ճանապարհի երկրորդ հատվածի մի մասի հիմնանորոգում սուբվենցոն ծրագրին:

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 11

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35 - րդ հոդվածի 1 - ին կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն Լոռու մարզի Արևաշող համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդումը:

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ. 0255-2-21-76
էլ. Փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 12

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 06 - Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արևաշող համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 6 - ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

Արևաշող համայնքի 2021թ – ի ապրիլի 6 – ի արտահերթ նիստի

1. Արեվաշող համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին:
2. Արեվաշող համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում կառուցված գյուղատնտեսական արտադրական օբյեկտների կիսակառույց շինությունը մրցույթով վարձակալության տալու մասին

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 13

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին մասի 21 - րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 - րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ - ի ապրիլի 12 - ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը Արևաշող համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Արևաշող համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ներքոհիշյալ հողամասը մեկ լոտով աճուրդ վաճառքով օտարելուն
   1) Լոտ – 1 ծածկագիր 06-021-0112-00269, 0.17805 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի գործառնական նշանակության, /վկ.01042021-06-0036/ մեկնարկային գինը սահմանել 110000 /մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին մրցույթով աճուրդ-վաճառքի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումները (ներառյալ՝ սերվիտուտները):
3. Սահմանել՝ աճուրդի և մրցույթի մասնակցության վճար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, աճուրդային մրցույթի մեկ քայլի չափը՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով, նախավճարի չափը սահմանել՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, Հեռ.0255-2-21-76, էլ փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 14

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին մասի 21 - րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 փվականի մայիսի 18 – ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով հիմք ընդունելով «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ – ի կողմից 2021 թվականի ապրիլի 4 – ին տրված անշարժ գույքի վարձակալման շուկայական արժեքի գնահատման մասին եզրակացությունը Արևաշող համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող 06-021-0120-001-002 ծածկագրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0,17 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատեսքի վրա կառուցված 981.0 քմ մակերեսով կիսակառույց շինությունը մրցույթով 25 տարի ժամկետով վարձակալության տալու համար:
2. Շինության վարձակալության մրցույթի մեկնարկային գինը սահմանել ամսական 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
3. Մրցույթի մասնակցության վճար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
4. Վարձակալության մրցույթի մեկ քայլի և նախավճարի չափը սահմանել՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով ՀՀ դրամ:
5. Համայնքի ղեկավարին վարձակալության մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, անշարժ գույքի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները, ինչպես նաև տվյալ գույքի նկատմամբ սահմանափակումները (ներառյալ՝ սերվիտուտները):
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԱՐԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՓԻՑԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**